

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը և Հայաստանի
Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր),

ճանաչելով բարեկամական հարաբերությունները և առկա
համագործակցության յունը Կողմերի միջև,

ինքնիշխանության, հավասարության նկատմամբ փոխադարձ հարգանքի
հիման վրա և հանուն փոխադարձ շահի, երկու երկրների միջև քրեական գործերով
փոխադարձ իրավական օգնության հարցերում արդյունավետ
համագործակցության յունն ամրապնդելու նպատակով,

որոշեցին կնքել սույն Պայմանագիրը և համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Կողմերը, սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան, հնարավորինս
լայն ծավալով տրամադրում են փոխադարձ իրավական օգնություն քրեական
հետապնդման, քննության և դատական վարույթի շրջանակներում, այնպիսի
հանցագործությունների առնչությամբ, որոնց համար պատժի նշանակումը
իրավական օգնություն խնդրելու ժամանակ ընկնում է հարցում ուղարկող Կողմի
իրավասության ներքո:

2. Նման օգնությունը ներառում է՝

ա) քրեական գործին առնչվող փաստաթղթեր հանձնելը.

բ) անձանցից ցուցմունքներ (վկայություններ) կամ հայտարարություններ
վերցնելը.

գ) համապատասխան փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց հաստատված
պատճենները, նյութերը և իրեղեն ապացույցները տրամադրելը.

դ) փորձագիտական եզրակացություններ ստանալը և տրամադրելը.

ե) անձանց և առարկաների գտնվելու վայրը և անձանց ինքնությունը պարզելը.

զ) հանցագործության վայրերի և առարկաների գնում կամ
ուսումնասիրություններ կատարելը.

է) ցուցմունքներ տալու կամ քննությանն օժանդակելու համար անձանց
(վկաների, տուժողների և փորձագետների) մասնակցությունն ապահովելը.

ը) ցուցմունքներ տալու կամ քննությանն օժանդակելու համար արգելանքի տակ
գտնվող անձանց տեղափոխելը.

թ) աջակցությունը ձեռքավորվածներին կամ այլ անձանց ցուցմունք տալուն
կամ օժանդակելը հետաքննության իրականացմանը.

ժ) հարցումներ, խուզարկություններ իրականացնելը, ստուգում, առգրավում,
արգելանք կիրառելը.

ժա) հանցավոր գործունեությունից ստացված միջոցների և հանցագործության գործիքների հարցում աջակցություն տրամադրելը.

ժբ) քրեական գործով վարույթի արդյունքների մասին ծանուցելը և քրեական գործով նյութեր տրամադրելը.

ժգ) օրենքի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելը և

ժդ) հարցում ստացող Կողմի օրենսդրությանը չհակասող և սույն Համաձայնագրի նպատակին համապատասխանող օգնության ցանկացած այլ ձև:

3. Սույն Պայմանագիրը կիրառվում է միայն երկու Կողմերի միջև փոխադարձ իրավական օգնության տրամադրման նկատմամբ: Սույն Պայմանագրի դրույթների համաձայն՝ մասնավոր անձանց արգելվում է ստանալ, թաքցնել կամ շտրամադրել որևէ ապացույց կամ խոչընդոտել հարցման կատարմանը:

Հոդված 2

Կենտրոնական մարմիններ

1. Սույն Պայմանագրի նպատակների համար Կողմերի կողմից նշանակված կենտրոնական մարմիններն անմիջականորեն հաղորդակցվում են միմյանց հետ փոխադարձ հարցմանը և օգնության անհշվող հարցերի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված կենտրոնական մարմիններն են՝ արդարադատության նախարարությունը և գլխավոր ժողովրդական դատախազությունը՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար, և ՀՀ գլխավոր դատախազությունը՝ մինչդատական վարույթում, և ՀՀ արդարադատության նախա քա ըությունը՝ դատական վարույթում գտնվող գործերով՝ Հայաստանի Հանրապետության համար:

3. Կողմն իր նշանակած կենտրոնական մարմինը փոխելու դեպքում այդ փոփոխության մասին դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է մյուս Կողմին:

Հոդված 3

Սահմանափակումները օգնության տրամադրման համար

1. Հարցում ստացող Կողմը կարող է օգնության տրամադրումը մերժել հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առաջացման դեպքում.

ա) հարցումը վերաբերում է այնպիսի արարքի, որը, հարցում ստացող Կողմի օրենսդրության համաձայն, հանցանք չի համարվում.

բ) հարցում ստացող Կողմը համարում է, որ հարցումը վերաբերում է քաղաքական հանցագործությանը բացի ահաբեկչական հանցագործություններից կամ այնպիսի հանցանքից, որը քաղաքական հանցագործություն չի համարվում այն միջազգային կոնվենցիայի համաձայն, որի կողմեր են հանդիսանում երկու պետությունները.

գ) արարքը հանցագործություն է միայն զինվորական օրենքներով.

դ) հարցում ստացող Կողմը լուրջ հիմքեր ունի կարծելու, որ հարցումը տրվել է ռասայի, սեռի, կրոնի, քաղաքացիության կամ քաղաքական համոզմունքների հիմքով

անձի նկատմամբ քննություն, հետապնդում, պատիժ կամ այլ գործողություններ իրականացնելու նպատակով, կամ որ նշված պատճառներից որևէ մեկի հիմքով տվյալ անձի վիճակը դատական վարույթի ժամանակ կարող է դառնալ նվազ բարենպաստ.

ե) հարցում ստացող Կողմը գտնվում է գործով քրեական վարույթը կարճելու փուլում կամ արդեն կարճել է այն կամ արդեն վերջնական դատավճիռ է կայացրել նույն կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հարցմանն առնչվող նույն հանցանքի համար.

զ) հարցում ստացող Կողմը կարծում է, որ հարցումը բավարարելու դեպքում այն կվտանգի իր ինքնիշխանությունը, անվտանգությունը, հասարակական կարգը կամ այլ կարևոր հանրային շահեր.

է) հարցում ստացող Կողմը կարծում է, որ պահանջվող օժանդակությունը երկրի առնչություն չունի գործի հետ, կամ

ը) եթե պահանջվող իրավական օգնությունը Հայցվող կողմից պահանջում է հարկադրանքի միջոցներ կիրառել, որոնք կարող են չհամապատասխանել իր ներպետական օրենսդրությանը և գործող ընթացակարգերին՝ հիմք ընդունելով այն, որ հանցանք կատարած անձը ենթակա է հետապնդման կամ մեղադրվում է տվյալ երկրի իրավասության ներքո:

2. Հարցում ստացող Կողմը կարող է հետաձգել օգնության տրամադրումը, եթե հարցումը խոչընդոտում է հարցում ստացող Կողմի տարածքում քրեական գործով իրականացվող քննությանը, հետապնդմանը կամ դատական վարույթին:

3. Նախքան հարցումը մերժելը կամ դրա կատարումը հետաձգելը, հարցում ստացող Կողմը անհրաժեշտության դեպքում քննարկում է նշված պայմաններով օգնություն տրամադրելու հնարավորությունը: Եթե հարցում ուղարկող Կողմն ընդունում է նշված պայմաններով տրամադրվող օգնությունը, ապա նա գործում է այդ պայմաններին համապատասխան:

4. Հարցում ստացող Կողմը օգնության տրամադրումը մերժելու կամ հետաձգելու դեպքում հարցում ուղարկող Կողմին տեղեկացնում է մերժման կամ հետաձգման պատճառների մասին:

Հոդված 4

Հարցումների ձևը և բովանդակությունը

1. Օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը կազմվում է գրավոր և հաստատվում է հարցում ուղարկող Կողմի կենտրոնական մարմնի կնիքով կամ նրա ներկայացուցչի ստորագրությամբ: Հրատապ իրավիճակներում հարցում ուղարկող Կողմը կարող է հարցումը ներկայացնել այլ ձևով, օրինակ՝ հեռագրով, ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով, որոնք ընդունելի են հարցում ստացող Կողմի համար, ինչից հետո հարցում ուղարկող Կողմն անմիջապես գրավոր հաստատում է իր հարցումը:

2. Օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը ներառում է հետևյալը.

ա) հարցմանն առնչվող քրեական գործով քննությունը, հետապնդումը և դատական վարույթն իրականացնող իրավասու մարմնի անվանումը.

բ) հարցմանն առնչվող քրեական գործի բնույթի նկարագրությունը, գործով փաստերի ամփոփ շարադրանքը և կիրառվող օրենքի դրույթների տեքստը.

գ) հայցվող օգնության նկարագրությունը, դրա նպատակն ու վերաբերելիությունը տվյալ գործին և

դ) հարցման բավարարման համար ցանկալի ժամանակահատվածը:

3. Անհրաժեշտ չափով և հնարավորությունների սահմաններում օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը նաև ներառում է հետևյալը.

ա) տեղեկություններ այն անձի ինքնության կամ բնակության վայրի մասին, որից պահանջվում է ցուցմունքներ տալ (անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ ու վայր և անձը հաստատող փաստաթղթի տեսակ, համար և հասցեներ) .

բ) տեղեկություններ այն անձի ինքնության և գտնվելու վայրի մասին, որի գտնվելու վայրը և ինքնությունը պետք է պարզվեն.

գ) զննման և ուսումնասիրման ենթակա օբյեկտի կամ տեղանքի նկարագրությունը.

դ) հարցումների, խուզարկման, սառեցման, առգրավման կամ արգելանքի ենթակա օբյեկտի նկարագրությունը.

ե) այն հատուկ ընթացակարգի նկարագրությունը, որը հարցում ուղարկող կողմը ցանկանում է պահել հարցումը կատարելու ժամանակ, և այն պահելու պատճառները.

զ) գաղտնիությունը պահելու պահանջի նկարագրությունը և պատճառները.

է) տեղեկություններ այն դրամական հատուցումների և ծախսերի վերաբերյալ, որոնք պետք է կատարվեն գործի համար վկայություն տալու կամ վարույթին օգնելու համար հրավիրված անձի հարցում ուղարկող Կողմ ներկայանալու համար. կնշվեն՝

ը) այն հարցերի ցանկը, որոնց պետք է պատասխանի վկան. տուժողը կամ փորձագետը.

թ) նմանատիպ այլ տեղեկություններ, որոնք կարող են դյուրացնել հարցման բավարարումը:

4. Փաստաթղթերի հանձնման մասին հարցումները պետք է պարունակեն տեղեկություն անձի ինքնության ու բնակության վայրի (ամբողջական անունը, հասցեները կամ տեղեկություն, որը կարող է բավարար լինել վերջինիս հասցեն պարզելու համար), գործի քննության հետ տվյալ անձի առնչության վերաբերյալ:

5. Եթե հարցում ստացող Կողմը կարծում է, որ հարցման մեջ ներառված տեղեկությունները բավարար չեն հարցմանն ընթացք տալու համար, նա կարող է լրացուցիչ տեղեկություններ պահանջել:

6. Հարցումները և սույն Պայմանագրի համաձայն պահանջվող հիմնավորող փաստաթղթերը պետք է կազմվեն երկու օրինակից:

Հոդված 5

Լեզուն

1. Սույն Պայմանագրի համաձայն ներկայացված հարցումներն և հիմնավորող փաստաթղթերը ներկայացվում են հարցում ստացող Կողմի լեզվով կամ անգլերեն թարգմանությամբ, եթե Կողմերը այլ կերպ չեն պայմանավորվել:

2. Հարցում ուղարկող Կողմին օգնություն տրամադրելիս Հարցում ստացող Կողմն օգտագործում է իր պետական լեզուն՝ անգլերեն թարգմանությամբ, եթե Կողմերը այլ կերպ չեն պայմանավորվել:

Հոդված 6 Հարցումների կատարումը

1. Հարցում ստացող Կողմը օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը կատարում է իր պետական օրենսդրությանը համապատասխան:

2. Հարցում ստացող Կողմը կարող է, այնքանով, որքանով դա չի հակասում իր պետական օրենսդրությանը, օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը բավարարել այն ուղարկող Կողմի պահանջած ձևով:

3. Հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին անմիջապես տեղեկացնում է հարցման արդյունքների մասին: Եթե պահանջվող օգնությունը չի կարող տրամադրվել, ապա հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին անմիջապես տեղեկացնում է դրա պատճառների մասին:

Հոդված 7 Գաղտնիություն պահելը և օգտագործման սահմանափակումները

1. Հարցում ստացող Կողմը գաղտնի է պահում հարցումը, ներառյալ դրա բովանդակությունը, հիմնավորող փաստաթղթերը և այդ հարցման համաձայն ձեռնարկած բոլոր գործողությունները, եթե հարցում ուղարկող Կողմն այդպես է պահանջում: Եթե հարցումը չի կարող բավարարվել առանց խախտելու գաղտնիության պահպանման սկզբունքը, ապա հարցում ստացող Կողմը այդ մասին տեղեկացնում է հարցում ուղարկող Կողմին, որը այնուհետև որոշում է, թե արդյոք հարցումը, այնուամենայնիվ, պետք է բավարարվի:

2. Հարցում ուղարկող Կողմը գաղտնի է պահում հարցում ստացող Կողմի տրա մադրած տեղեկությունները և ապացույցները, եթե հարցում ստացող Կողմն այդպես է պահանջում, կամ նման տեղեկությունները կամ ապացույցներն օգտագործում է միայն հարցում ստացող Կողմի նշած ժամկետներում և պայմաններով:

3. Հարցում ուղարկող Կողմը սույն Պայմանագրի շրջանակներում ստացած տեղեկությունները կամ ապացույցները չի օգտագործում հարցման մեջ նշված գործին չվերաբերող որևէ այլ նպատակով՝ առանց հարցում ստացող Կողմի հետ նախնական համաձայնության:

Հոդված 8 Փաստաթղթերի հանձնումը

1. Հարցում ստացող Կողմը, իր պետական օրենսդրության համաձայն և պահանջի դեպքում, հանձնում է հարցում ուղարկող Կողմի փոխանցած փաստաթղթերը: Այնուամենայնիվ, հարցում ստացող Կողմը պարտավոր չէ հանձնել

այն փաստաթղթերը, որոնց համաձայն անձից պահանջվում է ներկայանալ որպես պաշտպանյալ:

2. Հարցում ստացող Կողմը պահանջը կատարելուց հետո հարցում ուղարկող Կողմին տրամադրում է ապացույց, որը պետք է ներառի պահանջի կատարման տեղը, ժամանակը, պահանջի տեսակը և ստորագրված կամ կնքված լինի կատարող իրավասու մարմնի կողմից:

Հոդված 9

Ապացույցներ ձեռք բերելը

1. Հարցում ստացող Կողմը, իր ներպետական օրենսդրության համաձայն և պա հանջի դեպքում, վկայություն է վերցնում վկաներից և տուժողներից՝ ստուգելով նրանց ցուցմունքները, ձեռք է բերում փորձագիտական եզրակացություններ, հավա քա գրում փաստաթղթերը, հողվածներ ու հարցման մեջ նշված այլ ապացույցները և դրանք փոխանցում հարցում ուղարկող Կողմին:

2. Այն դեպքում, երբ հարցումը վերաբերում է փաստաթղթերի և նյութերի փո խանց մանր, հարցում ստացող Կողմը կարող է փոխանցել վավերացված պատճեն ները կամ դրանց լուսապատճենները: Այնուամենայնիվ, եթե հարցում ուղարկող Կողմը հստակորեն պահանջում է փաստաթղթերի բնօրինակների փոխանցում, ապա հարցում ստացող Կողմը հնարավորինս բավարարում է այդ պահանջը:

3. Այնքանով, որքանով դա չի ե ա կ ա ս ու մ հարցում ստացող Կողմի օրենսդրությանը, հարցում ուղարկող Կողմին սույն հողվածի համաձայն փոխանցվող փաստաթղթերը և մյուս նյութերը վավերացվում են այնպես, ինչպես կարող է պահանջել հարցում ուղարկող Կողմը՝ հարցում ուղարկող Կողմի օրենսդրության համաձայն, ընդունելի դարձնելու նպատակով:

4. Այնքանով, որքանով դա չի հակասում հարցում ստացող Կողմի օրենսդրությանը, հարցում ստացող Կողմը թույլատրում է հարցման մեջ նշված անձանց ներկայությունը հարցումը բավարարելու ժամանակ և այդ անձանց թույլ է տալիս հարցեր տալ ցուցմունք տվող անձին հարցում ստացող Կողմի իրավասու մարմինների անձնակազմի միջոցով: Այս նպատակով հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին անմիջապես տեղեկացնում է հարցման կատարման ժամանակի և վայրի մասին:

Հոդված 10

Ցուցմունքներ տալուց հրաժարվելը

1. Այն անձը, որը պետք է, սույն Պայմանագրի դրույթներին համաձայն, տա ցուցմունքներ, կարող է հրաժարվել ցուցմունքներ տալուց, եթե հարցումն ստացող կամ ուղարկող Կողմի օրենսդրության համաձայն՝ տվյալ անձը կարող է ցուցմունքներ չտալ հարցումն ստացող կամ ուղարկող Կողմում՝ նմանատիպ հանգամանքներում հարուցված վարույթի ընթացքում:

2. Եթե այն անձը, որը պետք է, սույն Պայմանագրի համաձայն, տա ցուցմունքներ, հայտարարում է, հարցում ուղարկող Կողմի օրենսդրության

համաձայն, ցուցմունքներ տալուց ազատված լինելու իր իրավունքի կամ արտոնության մասին, ապա հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին տեղեկացնում է այդ անձի հայտնած կարծիքի մասին և հարցում ուղարկող Կողմից պահանջում է նման իրավունքի կամ արտոնության առկայության վերաբերյալ ապացույցներ տրամադրել: Հարցում ուղարկող Կողմի տրամադրած ապացույցը բավարար հիմք է համարվում նման իրավունքի կամ արտոնության առկայությունն ապացուցելու համար, եթե չկա հակառակի մասին վկայող հստակ ապացույց:

Հոդված 11

Ցուցմունքներ տալու կամ հետաքննությանն օժանդակելու համար անձանց հասանելիությունը

1. Հարցում ստացող Կողմը, հարցում ուղարկող Կողմի պահանջով, համապատասխան անձին հրավիրում է ներկայանալ հարցում ուղարկող Կողմի տարածքում գտնվող համապատասխան մարմիններին՝ ցուցմունքներ տալու կամ քննությանն օժանդակելու համար: Հարցում ուղարկող Կողմը նշում է ապրուստի և ծախսերի չափի մասին, որոնք կվճարվեն անձին, ինչպես նաև՝ այն երաշխիքների ցանկը, որոնցով տվյալ անձը օժտված է՝ սույն Պայմանագրի 13-րդ հոդվածի համաձայն:

Այս կարգով հրավիրված անձը ինքն է որոշում իր ներկայանալու հարցը: Հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին անմիջապես հայտնում է այդ անձի պատասխանի մասին:

2. Հարցում ուղարկող Կողմն իր տարածքում ցուցմունք տալու կամ հետաքննությանն օժանդակելու համար անձի ներկայանալու մասին խնդրանքը հաղորդում է ներկայանալու համար նախատեսված օրվանից առնվազն վաթսուս օր առաջ: Հրատապ դեպքերում հարցում ստացող Կողմը կարող է իր համաձայնությունը տալ ավելի կարճ ժամկետի համար:

Հոդված 12

Ռատապարտյալների ներկայության ապահովումը հետաքննությանը աջակցելու կամ վկայություն տալու նպատակով

1. Հարցում ստացող Կողմը կարող է, հարցում ուղարկող Կողմի պահանջով, իր տարածքում արգելանքի տակ գտնվող անձին ժամանակավորապես տեղափոխել ցուցմունքներ տալու կամ հետաքննությանն օժանդակելու համար պայմանով, որ տեղափոխվող անձը տա իր համաձայնությունը, և Կողմերը նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերած լինեն տեղափոխման պայմանների վերաբերյալ:

2. Եթե տեղափոխվող անձը, հարցում ստացող Կողմի օրենսդրության համաձայն, պետք է արգելանքի տակ պահվի, ապա հարցում ուղարկող Կողմն այդ անձին պահում է արգելանքի տակ:

3. Հարցում ուղարկող Կողմը պետք է հարցում ստացող Կողմին տեղափոխված անձին վերադարձնի անմիջապես նրա վկայություն տալուց, քննությանն օժանդակելուց հետո կամ հնարավորինս շուտ այն պահից, երբ նրա ներկայությունն այլևս անհրաժեշտ չէ:

4. Սույն հոդվածի նպատակներով՝ հարցում ուղարկող Կողմում արգելանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցվում է հարցում ստացող Կողմի մոտ ժամանակավորապես տեղափոխված անձի նկատմամբ նշանակված պատիժը կրելու ժամկետին:

Հոդված 13

Վկաների և փորձագետների պաշտպանությունը

1. Հարցում ուղարկող Կողմը չի քննում, հետապնդում, կալանավորում, պատժում կամ անձնական ազատության որևէ այլ սահմանափակման ենթարկում իր տարածքում գտնվող որևէ վկայի կամ փորձագետի այլ և պի սի գործողությունների կամ բաց թողնման համար, որոնք նախորդել են իր տարածք այդ անձի մուտք գործելուն, ինչպես նաև՝ այդ անձին չի պարտադրում ցուցմունքներ տալ կամ օժանդակել որևէ հետաքննության, հետապնդման կամ որևէ այլ վարույթի, որոնք չեն առնչվում հարց մանը, առանց հարցում ստացող Կողմի և տվյալ անձի նախնական համաձայնության:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չի կիրառվում, եթե սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձը 15 օր շարունակ մնացել է հարցում ուղարկող Կողմի տարածքում այն բանից հետո, երբ նրան պաշտոնապես տեղեկացրել են, որ իր ներ կա յության անհրաժեշտությունն այլևս չկա, կամ՝ երբ մեկնելուց հետո նա կամովին վերադարձել է: Մակայն այդ ժամկետը չի ներառում այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ անձը չի մեկնում հարցում ուղարկող Կողմի տարածքից իրենից անկախ պատճառներով:

3. Անձը, 11-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ ցուցմունք տալուց կամ հետաքննությանն օժանդակելուց հրաժարվելու դեպքում, իր հրաժարման համար չի ենթարկվում որևէ պատասխանատվության կամ անձնական ազատության պարտադիր սահմանափակման:

Հոդված 14

Հարցումները, խուզարկությունը, սառեցումը, առգրավումը և արգելանք դնելը

1. Հարցում ստացող Կողմը, այնքանով, որքանով դա թույլատրվում է իր պետա կան օրենսդրությամբ և հաշվի առնելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը, կատարում է ապացույց հանդիսացող նյութերի, իրերի և ակտիվների առնչությամբ հարցումներ, խուզարկություն, սառեցում և առգրավում իրականացնելու վերաբերյալ պահանջը:

2. Հարցում ստացող Կողմը հարցում ուղարկող Կողմին տրամադրում է հարց ման բավարարման արդյունքները՝ ներառյալ հարցումների կամ խուզարկության արդյունք ները, սառեցման, առգրավման կամ արգելանք դնելու

վայրն ու հանգա մանք ները և դրանց հաջորդող՝ այդ նյութերը, իրերը կամ ակտիվներն արգելանքի տակ վերցնելը:

3. Հարցում ստացող Կողմը կարող է հարցում ուղարկող Կողմին փոխանցել առգրավված նյութերը, իրերը կամ ակտիվները, եթե հարցում ուղարկող Կողմը

համաձայնում է պահել հարցում ստացող Կողմի՝ նման փոխանցում կատարելու համար առաջարկած ժամկետները և պայմանները:

Հոդված 15

Փաստաթղթերը, նյութերը և իրեղեն ապացույցները վերադարձնելը

Հարցում ստացող Կողմի պահանջով հարցում ուղարկող Կողմը հնարավորինս կարճ ժամկետում հարցում ստացող Կողմին վերադարձնում է, սույն Պայմանագրի 9-րդ և 14-րդ հոդվածների համաձայն, վերջինիս կողմից իրեն տրամադրված փաստաթղթերի կամ նյութերի բնօրինակները և իրեղեն ապացույցները:

Հոդված 16

Հանցավոր ճանապարհով ստացած եկամուտներ և հանցագործության գործիքները

1. Սույն հոդվածում «հանցավոր ճանապարհով ստացած եկամուտ» հասկա ցույցունը նշանակում է՝ ցանկացած գույք, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել կամ օգտագործվել է հանցագործության կատարման արդյունքում:

2. Հարցում ստացող Կողմը պահանջի դեպքում փորձում է պարզել, թե արդյոք իր տարածքում ի պահ չեն տրվել հանցավոր ճանապարհով ստացված միջոցներ և եկամուտներ կամ հանցագործության գործիքներ, և հարցում ուղարկող Կողմին ծանուցում է արդյունքների մասին: Հարցումն ուղարկելիս հարցում ուղարկող Կողմը հարցում ստացող Կողմին ծանուցում է վերը նշված միջոցների կամ գործիքների՝ ենթադրաբար վերջինիս տարածքում ի պահ տրված լինելու պատճառների մասին:

3. Կասկածվող եկամուտները կամ հանցագործության գործիքները սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն գտնվելուց անմիջապես հետո հարցում ստացող Կողմը միջոցներ է ձեռնարկում, հարցում ուղարկող Կողմի պահանջով, այդ միջոցները կամ գործիքներն, իր պետական օրենսդրությանը համապատասխան, ստոեցնելու, առգրավելու, բռնագրավելու կամ արգելանք դնելու համար:

4. Հարցում ուղարկող Կողմի պահանջով հարցում ստացող Կողմը կարող է, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներին և պայմաններին համապատասխան, հարցում ուղարկող Կողմին փոխանցել բոլոր եկամուտները կամ դրանց մի մասը, կամ հանցագործության գործիքները, կամ նման ակտիվների վաճառքից ստացված միջոցները՝ այնքանով, որքանով դա թույլատրվում է իր ներպետական օրենսդրությամբ:

5. Սույն հոդվածը կիրառելիս պահպանվում են նշված միջոցների կամ գործիքների նկատմամբ հարցում ստացող Կողմի և ցանկացած երրորդ կողմի օրինական իրավունքները և շահերը:

Հոդված 17

Քրեական գործով վարույթի արդյունքների մասին ծանուցելը

Հարցում ուղարկող Կողմը պահանջի դեպքում հարցում ստացող Կողմին տեղեկացնում է այն քրեական վարույթի արդյունքների մասին, որին վերաբերում է օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումը:

Հոդված 18

Դատվածության մասին տեղեկություններ տրամադրելը

Եթե անձը քննվում կամ հետապնդման է ենթարկվում հարցում ուղարկող Կողմում, ապա հարցում ստացող Կողմը պահանջի դեպքում տրամադրում է հարցում ստացող Կողմում տվյալ անձի դատվածության մասին տեղեկություններ:

Հոդված 19

Իրավունքի նորմերի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելը

Կողմերը պահանջի դեպքում միմյանց տրամադրում են սույն Պայմանագրի կատարմանն առնչվող օրենքների և իրենց համապատասխան երկրներում առկա դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկություններ:

Հոդված 20

Իսկության հաստատում

Սույն Պայմանագրի նպատակների համար, սույն Պայմանագրի համաձայն, փոխանցվող փաստաթղթերի համար իսկության հաստատում չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով:

Հոդված 21

Ծախսերը

1. Հարցում ստացող Կողմը հոգում է հարցումը կատարելու հետ կապված ծախսերը, իսկ հարցում ուղարկող Կողմի հաշվին կատարվում են՝

ա) անձանց հարցում ստացող Կողմ ուղևորվելու, այնտեղ մնալու և հարցում ստացող Կողմից մեկնելու հետ կապված ծախսերը՝ սույն Պայմանագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն.

բ) անձանց հարցում ուղարկող Կողմ ուղևորվելու, այնտեղ մնալու և հարցում ուղարկող Կողմից մեկնելու հետ կապված դրամական հատուցումները կամ ծախսերը՝ սույն Պայմանագրի 11-րդ և 12-րդ հոդվածների համաձայն, այն վայրում սահմանված չափանիշներին կամ կանոնակարգերին համապատասխան, որտեղ կատարվել են այդ դրամական հատուցումները կամ ծախսերը.

գ) փորձագիտական եզրակացությունների համար նախատեսված ծախսերը և

դ) բանավոր ու գրավոր թարգմանությունների համար նախատեսված ծախսերը՝ բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են 5-րդ հոդվածով:

2. Պահանջի դեպքում հարցում ուղարկող Կողմը իր կողմից կատարվելիք ծախսերի համար վճարում է նախապես:

3. Հարցումը կատարելու համար արտառոց ծախսեր պահանջվելու դեպքում Կողմերը խորհրդակցում են՝ որոշելով այն ժամկետներն ու պայմանները, որոնց համապատասխան՝ հարցումը կարող է կատարվել:

Հոդված 22

Համագործակցության այլ հիմքերը

Սույն Պայմանագիրը չպետք է խոչընդոտ լինի Կողմերից յուրաքանչյուրի համար, գործող այլ միջազգային պայմանագրերի շրջանակներում կամ իրենց ներպետական օրենսդրության համաձայն, մյուս Կողմին օգնություն տրամադրելու հարցում: Կողմերը կարող են նաև օգնություն տրամադրել ցանկացած այլ պայմանավորվածության, համաձայնության կամ սովորույթների համաձայն:

Հոդված 23

Վեճերի լուծումը

Սույն Պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ լուծվում է դիվանագիտական ուղիներով անցկացվող խորհրդակցությունների միջոցով, եթե Կողմերի կենտրոնական մարմիններն ինքնուրույն համաձայնության չեն գալիս:

Հոդված 24

Պայմանագրի ուժի մեջ մտնելը, դրա մեջ փոփոխություններ կատարելը և այն դադարեցնելը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուսին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է սույն Պայմանագրի օրինական ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերն իր օրենսդրությանը համաձայն ավատվելու մասին: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում նշված գրավոր ծանուցումն ստանալուց հետո՝ երեսուներորդ օրը:

2. Պայմանավորվող կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարել փոփոխություններ: Դրանք ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և կհանդիսանան Պայմանագրի մասը:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Պայմանագրի գործողությունը՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Պայմանագրի գործողությունը դադարում է ծանուցումը ներկայացնելու օրվան հաջորդող հարյուրութսուներորդ օրը:


4. Սույն Պայմանագիրը կիրառվում է ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ցանկացած հարցման նկատմամբ, եթե նույնիսկ համապատասխան

գործողությունները կամ անգործությունը տեղի են ունեցել նախքան սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Պայմանագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Պեկին քաղաքում, 2015 թվականի մարտի 25-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը չինարեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Պայմանագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Չինաստանի Ժողովրդական
Հանրապետության կողմից՝



Հայաստանի Հանրապետության
կողմից՝

